կառքը. Ս. Հայրապետը բարեհաճեցաւ մտնել կառքը. որին հետեւեցին երկար շարք—կառքերի և խուռն բազմութիւն, որեւ առաջ գնաց դէպի Աղէքսանդրեան այգին, որոց հանդէպ Հայոց եկեղեցական դասը զգեստաւորուած սպասում էր իւր եկեղեցւոյ Պետին։ Այս տեղից մինչեւ վանաց Մայր եկեղեցին ճանապարհը յարդարած էր, ինչպէս կ'վայելէր օրուան հանդիսին։ Նորին Օծութիւնը հետիոտս գնում էր ամպհովանու տակ, որ կրում էին չորս պատուաւոր անձինք։ Մայր եկեղեցում Վեհափառ տէրը կատարեց համառօտ աղօթք և դառնալով դէպի ժողովուրդը՝ ողջունեց Նրան Ս. Աթոռի կողմից, որ տեղից ինքն եկել էր յայտնելու Նորին Կայսերական Մեծութեան թէ Հայ եկեղեցական դասի և հօտի և թէ՝ իւր սեպհական հաւատարմութեան զգացմունքներն, և յորդորեց ժողովրդեան ջերմեռանդութեամբ աղօթել առ Ամենաբարձրեալն Աստուած, որպէս զի Կովկասը, բաղդաւորուած իւր Թագաւորի այցելութեամբ, թողնէ Նորա վերայ ուրախ տպաւորութիւն. Նորին Օծութիւնը վերջացրեց իւր ճառը, «Օրհնեսցէ Տէր զմուտ և զել Նորա» խօսքերով, որը ժողովուրդը կնքեց միաձայն ասելով՝ ամէն. եկեղեցուց Նորին Օծութիւնը մեր դրպրոցների աշակերտների և աշակերտուհիների միջով, որոնք շարուած էին եկեղեցուց մինչեւ վեհարանի սանդուղները, և անընդհատ «կեցցէով» թնդացնում էին օդը. Կաթուղիկոսը բարձրացաւ վեհարանի սանդուղների գլուխը, որտեղից օրհնելով ժողովրդեանը խաչակնքեց և մտաւ առաջնորդարանը, ուր Նրան դիմաւորեց նահանգապետի օգնական իշխան Շերվաշիձէն։ Կարճատեւ խօսակցութիւնից յետոյ՝ նահանգապետի, քաղաքագլխի և այլոց հետ, Նորին Օծութիւնը մտաւ ներսի սենեակները հանգստանալու։

Ամսոյս 16ին Նորին Օծութեան սկսան ներկայանալ բարձրաստիճան անձինք։ Ի միջի այլոց ներկայացան Ֆրանսական, Պարսից և Օսմանեան հիւպատոսները. նոյնպէս և Պարսկաստանից եկած լիազօր դեսպանն Ռուսաց՝ իշխան Ն. Դոլգօրուկին, Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձու Պ. Եանովսկին նոյնպէս պատիւ ունեցաւ ներկայանալու Նորին Օծութեան։ Այցելեցին նոյնպէս և Պարսից արքայազնը և իշխան Լ. Մելիքովն, իսկ Վրաց ազնուա-